ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
7 նոյեմբերի 2023 թվականի N 448-Ա

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 4-րդ կետով և 19-րդ հոդվածով, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասով և 22-րդ հոդվածի 9-րդ մասով՝

ո ր ո շ ու մ եմ.

«Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի «ՀՀ Սյունիքի մարզպետարանի կողմից տարածքային, պետական կառավարման ապահովում» ծրագրի 11001 միջոցառման շրջանակում ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» հոդվածով նախատեսված միջոցների հաշվին 2023 թվականի հոկտեմբեր ամսում աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար դրամական պարգևատրմամբ խրախուսել Սյունիքի մարզպետի աշխատակազմի աշխատակիցներին՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2023թ. նոյեմբերի 7
ք. Կապան

Digitally signed by GHUKASYAN ROBERT 3712800290